Համախմբված ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

«Մեդիա Դիստրիբյուշն Քոմփանի» ՍՊԸ

31 դեկտեմբերի 2025թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն	6
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն	8
Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվություն	9
Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	11

Անկախ աուդիտորի եզրակացություն

Grant Thornton CJSC
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich Street
Yerevan 0015
Republic of Armenia

T +374 10 50 09 64/61

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
Երևան Պլազա բիզնես կենտրոն
ՀՀ, ք. Երևան 0015
Գրիգոր Լուսավորչի 9

Հեռ.՝ +374 10 50 09 64/61

«Մեդիա Դիստրիբյուշն Քոմփանի» ՍՊԸ-ի մասնակցին

Վերապահումով կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Մեդիա Դիստրիբյուշն Քոմփանի» ՍՊԸ-ի (Ընկերություն) և նրա դուստր ընկերության (միասին՝ Խումբ) համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը և դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ էական տեղեկատվությունը:

Մեր կարծիքով, բացառությամբ մեր եզրակացության *«Վերապահումով կարծիքի հիմքեր»* բաժնում նկարագրված հարցերի ազդեցության, կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Խմբի համախմբված ֆինանսական վիճակը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական արդյունքները և համախմբված դրամական հոսքերը՝ համաձայն հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից հրապարակված ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների:

Վերապահումով կարծիքի հիմքեր

Խումբը ցուցադրման լիցենզիաների շրջանակներում ստանում է ռոյալթիի տեսքով եկամուտ և կրում է համապատասխան ծախսեր: Նշված եկամուտներն ու ծախսերը ճանաչվում են՝ հիմք ընդունելով գործընկեր կազմակերպությունների կողմից տրամադրված ֆինանսական տեղեկատվությունը, ինչպես նաև գործընկեր կազմակերպությանը ներկայացվող տեղեկատվությունը: Աուդիտի ընթացքում մենք չկարողացանք ձեռք բերել բավարար և համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ հաստատելու գործընկեր կազմակերպությունների եկամուտների և ծախսերի հաշվարկների ճշգրտությունը, քանի որ Խմբում բացակայում էին վերահսկողական համակարգեր՝ տրամադրվող տվյալների հավաստիությունը և հաշվարկների ճշգրտությունը գնահատելու համար: Հետևաբար, մենք անկարող էինք որոշել՝ արդյոք առկա է այդ եկամուտների և ծախսերի գումարները ճշգրտելու անհրաժեշտություն:

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Խմբից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի միջազգային կանոնագրքի» (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտները)* (ՀԷՄՄԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են համախմբված ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում: Մենք նաև կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ նշված պահանջների և ՀԷՄՄԽ

կանոնագրքի համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր վերապահումով կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանք

Ինչպես ներկայացված է համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություն 5-ում, ղեկավարությունը վերաներկայացրել է 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համախմբված ֆինանսական հաշվետվությունները: Մենք աուդիտի ենք ենթարկել նաև այդ վերաներկայացումները:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՀՀՄՍԽ կողմից հրապարակված ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Խմբի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Խումբը լուծարելու կամ Խմբի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Խմբի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Խմբի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:

- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Խմբի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Խմբին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:
- Խմբի աուդիտը պլանավորում և իրականացնում ենք այնպես, որ ձեռք բերենք բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ Խմբի կազմի մեջ մտնող կազմակերպությունների կամ բիզնես միավորների ֆինանսական տեղեկատվության վերաբերյալ՝ որպես հիմք Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք ձևավորելու նպատակով: Մենք պատասխանատու ենք Խմբի աուդիտի շրջանակներում Խմբի կազմում ներգրավված կազմակերպություններին առնչվող աուդիտորական աշխատանքների իրականացման համար:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Արմեն Հովհաննիսյան
«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի տնօրեն

Էմիլ Վասիլյան, FCCA
Առաջադրանքի պատասխանատու

29 հոկտեմբերի 2026թ.

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	2025թ.	2024թ. (վերաներկայացված)
Հասույթ	6	6,918,280	7,469,431
Վաճառքի ինքնարժեք	7	(5,185,257)	(4,558,256)
Համախառն շահույթ		**1,733,023**	**2,911,175**
Այլ եկամուտ		32,116	3,883
Իրացման և շուկայավարման ծախսեր		(31,086)	(47,518)
Վարչական ծախսեր	8	(163,717)	(96,615)
Այլ ծախսեր	9	(618,393)	(194,737)
Գործառնական գործունեությունից շահույթ		**951,943**	**2,576,188**
Ֆինանսական եկամուտ		2,131	122,330
Ֆինանսական ծախսեր		(58,259)	(3,202)
Փոխարժեքային տարբերությունից զուտ օգուտ (վնաս)	10	(227,394)	199,279
Շահույթ մինչև հարկերը		**668,421**	**2,894,595**
Շահութահարկի գծով ծախս	11	(290,564)	(418,497)
Տարվա շահույթ		**377,857**	**2,476,098**
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		**377,857**	**2,476,098**

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 33-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ. (վերաներկայացված)	1 հունվարի 2024թ. (աուդիտ չարված)
Ակտիվներ				
Ոչ ընթացիկ ակտիվներ				
Ոչ նյութական ակտիվներ	12	708,616	2,052,142	497,417
Հետաձգված հարկային ակտիվներ	13	-	-	135,399
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**708,616**	**2,052,142**	**632,816**
Ընթացիկ ակտիվներ				
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	14	3,394,564	2,688,068	2,276,403
Այլ ընթացիկ ակտիվներ		-	-	124,748
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	15	1,759,725	452,829	658,554
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**5,154,289**	**3,140,897**	**3,059,705**
Ընդամենը ակտիվներ		**5,862,905**	**5,193,039**	**3,692,521**
Սեփական կապիտալ և պարտավորություններ				
Սեփական կապիտալ	16			
Կանոնադրական կապիտալ		10	10	10
Կուտակված շահույթ		3,229,359	2,851,502	375,404
Ընդամենը սեփական կապիտալ		**3,229,369**	**2,851,512**	**375,414**
Պարտավորություններ				
Ոչ ընթացիկ պարտավորություններ				
Փոխառություններ	17	509,766	451,520	-
Հետաձգված հարկային պարտավորություններ	13	5,105	23,986	-
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**514,871**	**475,506**	-
Ընթացիկ պարտավորություններ				
Շահութահարկի գծով պարտավորություն		223,322	176,173	156,366
Փոխառություններ	17	-	-	296,256
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	18	1,895,343	1,689,848	2,864,485
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**2,118,665**	**1,866,021**	**3,317,107**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		**5,862,905**	**5,193,039**	**3,692,521**

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2026թ. հոկտեմբերի 29-ին

Արմեն Հովհաննիսյան — Գործադիր տնօրեն

Սվետլանա Ղազարյան — Գլխավոր հաշվապահ

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների ծանոթագրություններ կազմող 1-ից մինչև 33-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Կանոնադրա-կան կապիտալ	Կուտակված շահույթ	Ընդամենը
2024թ. հունվարի 1-ի դրությամբ մնացորդ (աուդիտ չարված)	10	375,404	375,414
Տարվա շահույթ (վերաներկայացված)	-	2,476,098	2,476,098
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք (վերաներկայացված)	**-**	**2,476,098**	**2,476,098**
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ մնացորդ (վերաներկայացված)	**10**	**2,851,502**	**2,851,512**
Տարվա շահույթ	-	377,857	377,857
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	**-**	**377,857**	**377,857**
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ մնացորդ	**10**	**3,229,359**	**3,229,369**

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 33-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	2025թ.	2024թ. (վերաներկայացված)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա շահույթ	377,857	2,476,098
Ճշգրտումներ՝		
Ամորտիզացիա	2,314,309	634,513
Ոչ նյութական ակտիվների արժեզրկում	349,585	-
Ֆինանսական ծախսեր	58,259	3,202
Շահութահարկի գծով ծախս	290,564	418,497
Ֆինանսական եկամուտ	(2,131)	(122,330)
Փոխարժեքային տարբերությունից զուտ (օգուտ) վնաս	227,394	(199,279)
Գործառնական շահույթ նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները	**3,615,837**	**3,210,701**
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն	(490,336)	122,015
Այլ ակտիվների փոփոխություն	-	124,748
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	(223,532)	(1,506,840)
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ	**2,901,969**	**1,950,624**
Վճարված տոկոսներ	(13)	(9,691)
Վճարված շահութահարկ	(262,296)	(239,305)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	**2,639,660**	**1,701,628**

Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ	2025թ.	2024թ. (վերաներկայացված)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(1,320,368)	(2,189,238)
Ստացված տոկոսային եկամուտ	2,131	-
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	**(1,318,237)**	**(2,189,238)**
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Փոխառություններից մուտքեր, զուտ	-	284,083
Ֆինանսավորման գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	**-**	**284,083**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ (նվազում)	1,321,423	(203,527)
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	(14,527)	(2,198)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա սկզբում	452,829	658,554
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա վերջում	**1,759,725**	**452,829**

Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 33-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

«Մեդիա Դիստրիբյուշն Քոմփանի» ՍՊԸ

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (արտահայտված հազար հայկական (ՀՀ) դրամով

1 Գործառնությունների բնույթը

«Մեդիա Դիստրիբյուշն Քոմփանի» ՍՊԸ-ի (Ընկերություն) և նրա դուստր ընկերության (միասին՝ Խումբ) հիմնական գործունեությունը ներառում է պատվերով արտադրական գործունեության իրականացում, աուդիովիզուալ արտադրանքի՝ ֆիլմերի, սերիալների, հեռուստատեսային հաղորդումների և այլնի առք և վաճառք, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ չարգելված և Խմբի նպատակներին համապատասխանող գործունեության այլ տեսակների իրականացում: 2025 թվականի ընթացքում դուստր ընկերությունը շահույթ չի գեներացրել և չի իրականացրել էական գործառնական գործունեություն:

2 Ընդհանուր տեղեկատվություն, ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխանության հավաստում և անընդհատության ենթադրություն

«Մեդիա Դիստրիբյուշն Քոմփանի»-ն հանդիսանում է սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն և հիմնադրվել է Հայաստանի Հանրապետությունում 2022թ. մարտի 28-ին:

Գրանցման հասցեն է ՀՀ, ք. Երևան, 0014, Մամիկոնյանց 23 տուն, բնակարան 20:

«Մեդիա Դիստրիբյուշն Քոմփանի» ՍՊԸ-ի միակ մասնակիցը ՀՀ քաղաքացի պարոն Արմեն Հովհաննիսյանն է;

Խմբի աշխատակիցների միջին թվաքանակը 2025թ. կազմել է 9 մարդ (2024թ.՝ 5 մարդ):

«Մեդիա Դիստրիբյուշն Քոմփանի» ՍՊԸ-ն, իր հերթին, ունի 99.99% բաժնեմասնակցություն «Յոլու Մեդիա» ՍՊԸ-ում, որը գրանցված է Ղազախստանում: Չվերահսկող բաժնեմասը և ազդեցությունը աննշան են:

Դուստր ընկերություն

Համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներառված է հետևյալ դուստր ընկերությունը.

Դուստր ընկերություն	Մասնաբաժին %	Գրանցման երկիր	Հիմնական գործունեություն	Գրանցման ամսաթիվ
«Յոլու Մեդիա» ՍՊԸ	99.99	Ղազախստան	Առևտրային գործունեություն	18.03.2025թ.

Դուստր ընկերությունում ներդրումը գուդվիլ չի ներառում, քանի որ Խումբն իր մասնաբաժինը ձեռք է բերել դուստր ընկերությունը հիմնադրելու միջոցով:

Համապատասխանություն և անընդհատություն

Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից հրապարակված ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների համաձայն:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության հիմունքներով, քանի որ ղեկավարությունը կարծում է, որ Խումբն ունի համապատասխան ռեսուրսներ տեսանելի ապագայում անընդհատ գործունեություն իրականացնելու համար: Այս գնահատումը կատարելիս ղեկավարությունը հաշվի է առել տեղեկատվության լայն շրջանակ, ներառյալ շահութաբերության կանխատեսումը, կապիտալի նկատմամբ իրավական պահանջները և ֆինանսավորման կարիքները: Գնահատումը ներառում է նաև ողջամտորեն հնարավոր անկումային տնտեսական սցենարների և դրանց հնարավոր ազդեցությունների դիտարկումը Խմբի շահութաբերության, կապիտալի և իրացվելիության վրա:

Գործարար միջավայր

2025թ. Հայաստանի գործարար միջավայրը շարունակում է գտնվել աշխարհաքաղաքական լարվածության, տարածաշրջանային անվտանգության ռիսկերի և գլոբալ տնտեսության փոփոխվող

պայմանների ազդեցության տակ: Այս գործոնները նպաստում են տեղական ընկերությունների համար անորոշության աճին:

Ընթացիկ տարում տնտեսական ցուցանիշները տարբեր ոլորտներում անհավասար են եղել: Շարունակական աճը հիմնականում ապահովվել է առևտրի, ծառայությունների և շինարարության ոլորտներում՝ արտացոլելով մասնավոր սպառման և ներդրումային ակտիվության կայունությունը: Թեպետ նախկինում որոշակի ենթաճյուղերի կրճատումից կրած ազդեցության՝ արդյունաբերական արտադրությունը վերջին հաշվետու ժամանակաշրջանում ցուցաբերել է կայունություն և չափավոր բարելավում՝ նպաստելով արտադրական որոշակի գործունեության վերականգնմանը:

Ֆինանսական ոլորտը կայուն է մնացել՝ բանկային համակարգի բավարար կապիտալացվածությամբ և բանկային համակարգի պատշաճ վերահսկողությամբ պայմանավորված: Չնայած արտաքին ռիսկերի առկայությանը՝ կարգավորող վերահսկողությունը և վերահսկողական պրակտիկան շարունակաբար ապահովել են ֆինանսական հաստատությունների իրացվելիությունը, վճարունակությունը և գործառնական կայունությունը: 2025թ. Հայաստանի տնտեսական աճը կազմել է 5.1%, իսկ 2026թ. կանխատեսվում է 5.4%:

3 Նոր կամ վերանայված ստանդարտներ կամ մեկնաբանություններ

3.1 2025թ. հունվարի 1-ի դրությամբ ընդունված նոր ստանդարտներ

Ընթացիկ տարում Խումբն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2025թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի և ՖՀՄՄ մեկնաբանությունների կոմիտեի կողմից:

ՀՀՄՄ 21 *«Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքներ»* ստանդարտի փոփոխությունը՝ կապված *«Փոխանակելիության բացակայության»* հետ առաջին անգամ կիրառվել է 2025թ., որը սահմանում է պահանջներ՝ գնահատելու, թե երբ է արժույթը փոխարկելի այլ արժույթի նկատմամբ, և երբ՝ ոչ: Ստանդարտի այս փոփոխության ընդունումը ազդեցություն չի ունեցել Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

3.2 Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Խմբի կողմից

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Խմբի կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականությունում՝ սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից:

- ՖՀՄՄ 18 *«Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում և բացահայտում»*

  2024թ. ապրիլին ՀՀՄՄԽ-ն հրապարակել է ՖՀՄՄ 18 *«Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում և բացահայտում»* ստանդարտը, որը փոխարինում է ՀՀՄՄ 1 *«Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում»* ստանդարտը: Չնայած ՖՀՄՄ 18-ը ներառում է ՀՀՄՄ 1-ի բազմաթիվ պահանջներ, այն ներկայացնում է նոր պահանջներ՝ ֆինանսական հաշվետվությունների կառուցվածքը բարելավելու և ներդրողներին ավելի մանրամասն ու օգտակար տեղեկատվություն տրամադրելու նպատակով, ներառյալ՝

  - շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում երկու նոր ենթագումարի սահմանում՝ գործառնական շահույթ և շահույթ կամ վնաս մինչև ֆինանսավորումը և հարկերը

- շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում բոլոր եկամուտների և ծախսերի դասակարգում հետևյալ հինգ կատեգորիաներից մեկում՝ գործառնական, ներդրումային, ֆինանսավորման, հարկեր և ընդհատված գործառնություններ
- ղեկավարության կողմից սահմանված կատարողականի չափանիշների բացահայտման նոր պահանջ
- ֆինանսական հաշվետվություններում և կից ծանոթագրություններում ներկայացվող տեղեկատվության միավորման և տարանջատման սկզբունքների բարելավում

Նախկինում ՀՀՄՍ 1-ում ներառված որոշ բացահայտման պահանջներ տեղափոխվել են ՀՀՄՍ 8՝ առանց էական փոփոխությունների: Սա հատկապես վերաբերում է հաշվապահական հաշվառման քաղաքականության և գնահատման անորոշության աղբյուրների բացահայտումներին: Այս փոփոխությունների արդյունքում ՀՀՄՍ 8-ը կվերանվանվի *«Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հիմունքներ»*:

Ի հավելումն, ՀՀՄՍ 7 *«Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին»* ստանդարտում կատարվել են սահմանափակ փոփոխություններ, որոնք ներառում են անուղղակի մեթոդով պատրաստված հաշվետվության գործառնական գործունեությունից դրամական հոսքերի որոշման մեկնարկային կետի փոփոխությունը «շահույթ կամ վնասից» «գործառնական շահույթ կամ վնաս» և շահաբաժիններից և տոկոսներից դրամական հոսքերի դասակարգման ընտրանքի վերացումը: Բացի այդ, կան հետևողական փոփոխություններ մի շարք այլ ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտներում:

ՖՀՄՍ 18-ը ուժի մեջ է 2027թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար՝ ավելի վաղ կիրառման հնարավորությամբ: ՖՀՄՍ 18-ը կկիրառվի հետընթաց՝ կիրառելով հատուկ անցումային դրույթներ:

Խումբը ներկայումս գնահատում է ՖՀՄՍ 18-ի ազդեցությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների և համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների վրա:

Ղեկավարության գնահատմամբ չի ակնկալվում, որ այլ նոր ստանդարտները, փոփոխությունները և մեկնաբանությունները, որոնք չեն կիրառվել ընթացիկ տարում, էական ազդեցություն կունենան Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

- *«Ֆինանսական գործիքների դասակարգման և չափման փոփոխություններ»* (ՖՀՄՍ 9 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ) (ուժի մեջ է 2026թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար)
- *«Բնությունից կախված էլեկտրաէներգիային հղումով պայմանագրեր»* (ՖՀՄՍ 9 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ) (ուժի մեջ է 2026թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար)
- ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների տարեկան բարեփոխումներ - Հատոր 11 (ուժի մեջ է 2026թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար)
- ՖՀՄՍ 19 *«Դուստր ձեռնարկություններ առանց հանրային հաշվետվողականության. բացահայտումներ»* (ուժի մեջ է 2027թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար)

4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության էական հոդվածներ

4.1 Պատրաստման հիմքերը

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով: 2024թ. դեկտեմբերի 31-ի և 2024թ. հունվարի 1-ի դրությամբ, ինչպես նաև 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համեմատական տեղեկատվությունը ներառում է միայն Մայր ընկերության ֆինանսական տվյալները:

4.2 Համախմբման հիմքեր

Խմբի ֆինանսական հաշվետվությունները համախմբում են մայր ընկերության և դուստր ընկերության՝ 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական հաշվետվությունները: Դուստր ընկերության հաշվետու ամսաթիվը դեկտեմբերի 31-ն է:

Համախմբման ժամանակ Խմբի ընկերությունների միջև բոլոր գործարքները և մնացորդները բացառվում են, ներառյալ Խմբի ընկերությունների միջև գործարքների արդյունքում չվաստակած օգուտները և չկրած վնասները: Երբ ակտիվի ներխմբային վաճառքից առաջացող չկրած վնասը համախմբման ժամանակ հակադարձվում է, հիմքում ընկած ակտիվը նաև ենթարկվում է արժեզրկվածության գծով ստուգման՝ Խմբի տեսանկյունից: Դուստր ընկերության ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարներն անհրաժեշտության դեպքում ճշգրտվել են, որպեսզի ապահովվի Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականությանը համապատասխանությունը:

Խումբը դուստր ընկերության ընդհանուր համախառն եկամուտը կամ վնասը բաշխում է մայր ընկերության սեփականատերերի և չվերահսկող բաժնեմասերի միջև՝ առաջնորդվելով սեփականության համապատասխան բաժնեմասով:

4.3 Արժույթ

Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (ՀՀ դրամ), որն էլ հանդիսանում է Խմբի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Խմբի գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել կիրառելի է Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: ՀՀ դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

Արտարժույթով գործարքներ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Խմբի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքը.

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար	381.36	396.56
ՀՀ դրամ/1 Եվրո	449.01	413.89
ՀՀ դրամ/1 Ռուսական ռուբլի	4.87	3.71

Ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում և չափվում են պատմական արժեքով (հաշվարկվում են՝ օգտագործելով գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքը:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

4.4 Հասույթ

Հասույթը ձևավորվում է հիմնականում աուդիովիզուալ ստեղծագործությունների լիցենզիաների վաճառքից, ռոյալթիներից և ցուցադրումների մոնետիզացիայից:

Որոշելու համար, թե արդյոք անհրաժեշտ է ճանաչել հասույթ, թե ոչ, Խումբն առաջնորդվում է 5-քայլի գործընթացով.

1. Բացահայտել հաճախորդի հետ պայմանագիրը,
2. Բացահայտել կատարման պարտականությունները,
3. Որոշել գործարքի գինը,
4. Բաշխել գործարքի գինը կատարման պարտականությունների միջև,
5. Ճանաչել հասույթը, երբ կատարման պարտականությունը(ները) բավարարված են

Հասույթը ճանաչվում է կամ ժամանակի մեջ որևէ պահի կամ ժամանակի ընթացքում, երբ Խումբը բավարարում է կատարման իր պարտականությունը՝ հաճախորդին փոխանցելով խոստացված ակտիվը կամ ծառայությունը:

Խումբը ճանաչում է դեռևս չբավարարված կատարման պարտականությունների համար ստացված հատուցման դիմաց պայմանագրային պարտավորությունները և արտացոլում է այդ գումարները ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում: Նման ձևով, եթե Խումբը բավարարում է կատարման պարտականությունը մինչև հատուցման ստանալը, Խումբը ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ճանաչում է կամ պայմանագրային ակտիվ, կամ դեբիտորական պարտք՝ կախված նրանից, թե արդյոք հատուցման ժամկետը լրանալուց առաջ անհրաժեշտ է միայն որոշակի ժամանակ, թե այլ լրացուցիչ պայման:

Լիցենզիաների և արտադրված աուդիովիզուալ ստեղծագործությունների վաճառք

Լիցենզիաների և աուդիովիզուալ ստեղծագործությունների վաճառքից հասույթը ճանաչվում է ժամանակի որոշակի պահին՝ վաճառքի պահին, երբ օգտագործման իրավունքը փոխանցվում է գնորդին:

Ռոյալթի

Լիցենզիաների և աուդիովիզուալ ստեղծագործությունների վաճառքը, ելնելով օգտագործման իրավունքի տրամադրման պայմանագրերի պահանջներից, կարող է առաջացնել հասույթ ռոյալթիի տեսքով (երաշխավորված վճարի չափը գերազանցելու դեպքում): Ռոյալթիի տեսքով եկամուտը որոշվում է պայմանագրով սահմանված հաշվարկման տոկոսային հարաբերությամբ և ճանաչվում է ժամանակաշրջանի վերջում գործընկերների կողմից տրամադրված հաշվետվությունների հիման վրա:

Ցուցադրումների մոնետիզացիա

Ցուցադրումների մոնետիզացիայից ստացված հասույթը ճանաչվում է եռամսյակային կտրվածքով, համապատասխան աղբյուրներից՝ միջնորդական ծառայություն մատուցող կազմակերպության կողմից տրամադրվող մոնիտորիզացիայի տեղեկատվության հիման վրա:

Մոնիտորիզացիան ֆիլմերի և հեռուստահաղորդումների ոլորտում հանդիսանում է գործընթաց, որի միջոցով արձանագրվում է տվյալ ֆիլմի կամ հաղորդման դիտումների, օգտագործման և տարածման վիճակը:

4.5 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Խմբի կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ոչ նյութական ակտիվները ճանաչվում են այն դեպքում, երբ՝

- հավանական է, որ ակտիվին վերագրելի ապագա տնտեսական օգուտները կհոսեն Խումբ,
- ակտիվը վերահսկվում է Խմբի կողմից՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և

- ակտիվի արժեքը կարող է արժանահավատորեն չափվել:

Սկզբնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվը հաշվառվում է իր սկզբնական արժեքով (հաշվի առած հետագա ավելացվող ծախսումները) հանած կուտակված ամորտիզացիան և կուտակված արժեզրկումից կորուստը: Հետագա ծախսումները կապիտալացվում են ոչ նյութական ակտիվների սկզբնական արժեքի վրա, եթե ակնկալվում է, որ դրանց վերագրելի ապագա տնտեսական օգուտները կհոսեն Խումբ:

Խմբի որոշ ոչ նյութական ակտիվների ճանաչման առանձնահատկությունները ներկայացված են ստորև.

Լիցենզիաներ

Խմբի կողմից ֆիլմեր և այլ ծրագրեր հեռարձակելու իրավունք տրամադրող լիցենզիոն պայմանագրերի կնքման արդյունքում առաջանում են ոչ նյութական ակտիվներ: Դրանք ճանաչվում են լիցենզիայի ուժի մեջ մտնելու պահից:

Աուդիովիզուալ ստեղծագործություններ

Աուդիովիզուալ ստեղծագործություններն (ԱՎՍ) իրավունքներ են, որոնք առաջացել են սցենարների գրության և արտադրության պատվերի պայմանագրերի շրջանակում և սեփականության իրավունքով պատկանում են Խմբին:

Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա

Ամորտիզացիան հաշվարկվում է այն պահից, երբ ակտիվը մատչելի է դառնում օգտագործման համար: Ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայությունը որոշելիս հաշվի են առնվում մի շարք գործոններ, մասնավորապես ակտիվի նկատմամբ վերահսկողության ժամանակաշրջանը և ակտիվի օգտագործման նկատմամբ իրավական և նմանատիպ սահմանափակումները: Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում հետևյալ կերպ.

Լիցենզիաներն ամորտիզացվում են՝ ելնելով լիցենզիայի պայմանագրի պայմաններից ու սահմանված ժամկետներից: Խմբին սեփականության իրավունքով պատկանող աուդիովիզուալ ստեղծագործությունների օգտակար ծառայության ժամկետը սահմանվում է՝ 1-ից մինչև 50 տարի:

4.6 Ոչ նյութական ակտիվների արժեզրկում

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվներն արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստներն անմիջապես ճանաչվում են որպես ծախս, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորուստը դիտվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

4.7 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Խումբը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորություններն ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը և սկզբնական չափումը

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ հաշվի առած գործարքի հետ կապված ծախսումները (որտեղ կիրառելի է), բացառությամբ այն առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ և չափվում են գործարքի գնով՝ ՖՀՄՍ 15-ի պահանջներին համապատասխան:

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ամորտիզացված արժեքով հաշվառվող,
- իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող,
- իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով չափվող:

Դասակարգումը բնորոշվում է հետևյալ երկու պարագայով.

- Խմբի՝ ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը,
- ֆինանսական ակտիվի՝ պայմանագրային դրամական հոսքերի հատկանիշները:

Ֆինանսական ակտիվներին առնչվող ամբողջ եկամուտը և ծախսերը, որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, արտացոլված են ֆինանսական ծախսերում, ֆինանսական եկամուտում կամ փոխարժեքային տարբերությունից օգուտ կամ վնասում, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման, որն արտացոլված է այլ ծախսերում: Խմբի ֆինանսական ակտիվները, ըստ կատեգորիաների ներկայացված են Ծանոթագրություն 20.1-ում:

Ֆինանսական ակտիվների հետագա չափումը

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, եթե ակտիվները բավարարում են հետևյալ պայմաններին (և չեն դասակարգված որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող).

- դրանք պահվում են այն բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները և հավաքագրել դրանց հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը,
- ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմաններն առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ:

Սկզբնական ճանաչումից հետո այս ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն դեպքերում, երբ զեղչման ազդեցությունն աննշան է, զեղչում չի կատարվում: Ֆինանսական գործիքների այս կատեգորիայում են դասակարգվում Խմբի դրամական միջոցները և դրանց համարժեքները, առևտրային դեբիտորական պարտքերը և այլ դեբիտորական պարտքերի մեծամասնությունը:

Ներկայացված ժամանակաշրջաններում Խումբն իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ չունի:

Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր և պայմանագրային ակտիվներ

Խումբը հաշվառում է առևտրային և այլ դեբիտորական պարտքերը և պայմանագրային ակտիվներն՝ օգտվելով պարզեցված մոտեցումից և կորստի գծով պահուստը ձևակերպում է որպես գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ: Դրանք իրենցից ներկայացնում են պայմանագրային դրամական հոսքերի ակնկալվող դադարեցումները՝ հաշվի առնելով ֆինանսական ակտիվի գործողության ժամկետի ամբողջ ընթացքում ցանկացած պահի չմարվելու հնարավորությունը: Ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկելիս Խումբը օգտագործում է պահուստի մատրիցան՝ ելնելով պատմական փորձից, արտաքին ցուցանիշներից և ապագային առնչվող տեղեկատվությունից:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը

Խմբի ֆինանսական պարտավորությունները ներառում են փոխառությունները, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը: Խմբի ֆինանսական պարտավորությունները, ըստ կատեգորիաների, ներկայացված են Ծանոթագրություն 20.1-ում:

Ներկայացված ժամանակաշրջաններում Խումբն իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորություն չունի:

Փոխառություններ

Փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Իրական արժեքի և նոմինալ արժեքի տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ փոխառությունը ստացվել է սեփականատերերից: Այս դեպքում իրական և նոմինալ արժեքների միջև տարբերությունը ճանաչվում է սեփական կապիտալում որպես լրացուցիչ կապիտալ: Սկզբնական ճանաչումից հետո վարկերը և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այս արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Տոկոսավճարները և փոխառությունների հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը զուգահեռ՝ որպես ֆինանսական ծախսերի մի մաս, բացի որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանն ուղղակիորեն վերագրվող փոխառության ծախսումներից, որոնք կապիտալացվում են որպես այդ ակտիվի արժեքի մաս:

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

4.8 Շահութահարկ

Ընթացիկ հարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկ

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող

ժամանակավոր տարբերությունը: Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է գուդվիլի սկզբնական ճանաչումից կամ այլ ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի պահին չի ազդում ո՛չ հաշվապահական շահույթի, ո՛չ էլ հարկվող շահույթի վրա (բացի ձեռնարկատիրական գործունեության միավորումներից):

Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են հարկվող ժամանակավոր տարբերությունների համար, որոնք կապված են դուստր ընկերություններում ներդրումների ու համատեղ ձեռնարկումներում մասնակցությունների հետ, բացառությամբ այն դեպքերի, որտեղ Խումբն ի վիճակի է վերահսկելու ժամանակավոր տարբերության հակադարձումը, և հավանական է, որ ժամանակավոր տարբերությունը չի հակադարձվի տեսանելի ապագայում: Նմանատիպ ներդրումների և մասնակցությունների հետ կապված նվազեցվող ժամանակավոր տարբերություններից առաջացող հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են միայն այն չափով, որով հավանական է հարկվող շահույթի առկա լինելը, որի դիմաց կարող է օգտագործվել ժամանակավոր տարբերությունը, և որը կմարվի տեսանելի ապագայում:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Խումբը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Խումբը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները հաշվանցվում են, երբ կա իրավաբանորեն ամրագրված իրավունք՝ հաշվանցելու ընթացիկ հարկային ակտիվներն ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց, և երբ դրանք վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից, և Խումբը մտադիր է զուտ հիմունքով մարել ընթացիկ հարկային պարտավորություններն ու ակտիվները:

4.9 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են բանկային հաշիվներում առկա դրամական միջոցները, դրանց համարժեքները այլ կարճաժամկետ, բարձր իրացվելի ներդրումները, որոնց մարման ժամկետը ձեռքբերման օրից 90 օր է, որոնք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ: Դրամական միջոցները և դրանց համարժեքները պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները բավարարելու նպատակով, այլ ոչ թե ներդրման կամ այլ նպատակներով:

4.10 Սեփական կապիտալի հաշվառում

Խմբի կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով:

Կուտակված շահույթը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթը:

Մասնակիցների հետ բոլոր գործարքներն առանձին-առանձին գրանցված են սեփական կապիտալում:

Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են:

4.11 Հատուցումներ աշխատակիցներին

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա

ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

(ա) աշխատավարձերը և պարգևավճարները,

(բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները,

(գ) սոցիալական ապահովության մասհանումները և այլ սոցիալական վճարները,

(դ) ոչ դրամային հատուցումները:

Երբ աշխատակիցները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Խմբին մատուցում են ծառայություններ, Խումբը աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չզեղչված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայությունների դիմաց, ճանաչում է՝

(ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված ցանկացած գումար հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չզեղչված գումարը, Խումբը պետք է ճանաչի այդ տարբերությունը որպես ակտիվ (կանխավճարված ծախս)՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի,

(բ) որպես ծախս, եթե գումարը չի ներառվել այլ ակտիվի արժեքի մեջ:

Վճարովի բացակայություններ

Վճարովի բացակայությունների ձևով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են հետևյալ կերպ.

(ա) կուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքներն ապագա վճարովի բացակայությունների նկատմամբ,

(բ) չկուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Պարգևավճարներ

Պարգևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են միայն այն ժամանակ, երբ Խումբը ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և պարտականությունը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Խումբը վճարում չկատարելու ոչ մի իրատեսական այլընտրանք չունի:

4.12 Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում ղեկավարության կատարած նշանակալի դատողություններ և գնահատման անորոշություն

ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխան համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Խմբի ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում համախմբված ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա:

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

4.12.1 Գնահատման անորոշություն

Խումբն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին: Ստորև

ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

Ոչ նյութական ակտիվների արժեզրկում

Խումբն իր հաշվապահական քաղաքականության համաձայն իրականացնում է ոչ նյութական ակտիվների արժեզրկման գնահատում՝ համաձայն հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների պահանջներին (ՀՀՄՍ 36 *«Ակտիվների արժեզրկում»*): Ոչ նյութական ակտիվները պարբերաբար գնահատվում են՝ պարզելու, թե արդյոք առկա են արժեզրկման հայտանիշներ:

5 Համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաներկայացում

Խումբը կիրառում է հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները և իրականացնում է նախորդ տարիների սխալների ուղղումը հետընթաց՝ դրանց հայտնաբերումից հետո թողարկման համար հայտարարված համախմբված ֆինանսական հաշվետվությունների առաջին փաթեթում՝ վերահաշվարկելով ներկայացված նախորդող ժամանակաշրջանների համեմատելի այն գումարները, որոնցում տեղի է ունեցել սխալը, կամ եթե սխալը տեղի է ունեցել նախքան ամենավաղ ներկայացված ժամանակաշրջանը, այդ դեպքում՝ վերահաշվարկելով ներկայացված ամենավաղ նախորդող ժամանակաշրջանի համար ակտիվների, պարտավորությունների և սեփական կապիտալի սկզբնական մնացորդները: Համախմբված ֆինանսական հաշվետվությունները, ներառյալ նախորդ տարիների համադրելի համախմբված տեղեկատվությունը, ներկայացված են այնպես, կարծես ուղղումը կատարվել է այն ժամանակաշրջանում, որի ընթացքում առաջացել է դրա կատարման անհրաժեշտությունը: Հետևաբար, յուրաքանչյուր ներկայացված ժամանակաշրջանին վերաբերող ուղղման գումարը վերագրվում է այդ տարվա ֆինանսական տեղեկատվությանը:

2024 թվականին Խումբը կնքել է լիցենզիաների վաճառքի պայմանագրեր: 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվություններում դրանցից ստացվող հասույթը ճանաչվել է ժամանակի ընթացքում՝ պայմանագրի գործողության ժամկետում: Այդ պայմանագրերի կատարման նպատակով ձեռք բերված լիցենզիաները ճանաչվել են որպես ոչ նյութական ակտիվներ և ամորտիզացվել են համապատասխան վաճառքի պայմանագրի ժամկետի ընթացքում:

2025 թվականին ղեկավարությունը վերլուծել է վերը նշված լիցենզիաների վաճառքի պայմանագրերը և եզրակացրել, որ լիցենզիան փոխանցելուց հետո Խումբը գնորդի նկատմամբ այլ կատարման պարտականություններ չունի: Հետևաբար, ՖՀՄՍ 15-ի համաձայն՝ լիցենզիաների վաճառքից հասույթը պետք է ճանաչվեր ժամանակի մեջ որոշակի պահի, այն է՝ լիցենզիայի նկատմամբ վերահսկողությունը գնորդին փոխանցելու պահին: Վաճառքի նպատակով ձեռք բերված լիցենզիաները պետք է դրանց ձեռքբերման արժեքով ճանաչվեին ընթացիկ ակտիվներում, իսկ դրանց լիցենզիայի նկատմամբ վերահսկողությունը գնորդին փոխանցելու պահին՝ որպես վաճառքի ինքնարժեք:

Խումբը նախկին հաշվառումը դիտարկել է որպես նախորդ ժամանակաշրջանի սխալ և ՀՀՄՍ 8-ի համաձայն ուղղել է այն հետընթաց կարգով՝ վերաներկայացնելով 2024 թվականի համադրելի տեղեկատվությունը:

Վերաներկայացումների ազդեցությունը ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվության վրա 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հետևյալն է.

	Նախկինում ներկայացված 31 դեկտեմբերի 2024թ.	Վերաներկայացում	Վերաներկայացված 31 դեկտեմբերի 2024թ.
Ոչ նյութական ակտիվներ	3,903,498	(1,851,356)	2,052,142
Հետաձգված հարկային ակտիվներ	125,269	(125,269)	-
Ընդամենը ակտիվներ	**7,169,664**	**(1,976,625)**	**5,193,039**
Կուտակված շահույթ	2,171,472	680,030	2,851,502

	Նախկինում ներկայացված 31 դեկտեմբերի 2024թ.	Վերաներկայացում	Վերաներկայացված 31 դեկտեմբերի 2024թ.
Հետաձգված հարկային պարտավորություններ	-	23,986	23,986
Պայմանագրային պարտավորություններ (ոչ ընթացիկ)	1,927,646	(1,927,646)	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	1,986,838	(296,990)	1,689,848
Պայմանագրային պարտավորություններ (ընթացիկ)	456,005	(456,005)	-
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ	**7,169,664**	**(1,976,625)**	**5,193,039**

Վերաներկայացումների ազդեցությունը շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվության վրա 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար հետևյալն է.

	Նախկինում ներկայացված 2024թ.	Վերաներկայացում	Վերաներկայացված 2024թ.
Հասույթ	4,788,790	2,680,641	7,469,431
Վաճառքի ինքնարժեք	(2,706,900)	(1,851,356)	(4,558,256)
Շահութահարկի գծով ծախս	(269,242)	(149,255)	(418,497)
Տարվա շահույթ	1,796,068	680,030	2,476,098
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	1,796,068	680,030	2,476,098

6 Հասույթ

	2025թ.	2024թ. (վերաներկայացված)
Լիցենզիաների վաճառքից և ռոյալթիներից ստացված հասույթ	3,641,860	4,053,513
Ցուցադրումների մոնետիզացիայից հասույթ	3,192,769	3,331,751
Հետազոտական ծառայություններից հասույթ	83,651	70,950
Այլ	-	13,217
	6,918,280	**7,469,431**

7 Վաճառքի ինքնարժեք

	2025թ.	2024թ. (վերաներկայացված)
Վաճառված լիցենզիաների ինքնարժեք	336,407	2,009,978
Ռոյալթիների գծով ծախսեր	2,233,332	1,470,601
Ամորտիզացիա	2,314,309	634,513
Հատուցումներ աշխատակիցներին	42,995	43,013

	2025թ.	2024թ. (վերաներկայացված)
Թարգմանչության գծով ծախսեր	94,383	14,684
Միջնորդավճարի գծով ծախսեր	28,002	106,370
Չփոխհատուցվող հարկերից ծախսեր	9,814	40,862
Այլ	126,015	238,235
Ընդամենը	**5,185,257**	**4,558,256**

8 Վարչական ծախսեր

	2025թ.	2024թ.
Հատուցումներ աշխատակիցներին	130,827	87,779
Խորհրդատվական ծառայությունների գծով ծախսեր	19,028	8,836
Այլ ծախսեր	13,862	-
Ընդամենը	**163,717**	**96,615**

9 Այլ ծախսեր

	2025թ.	2024թ.
Ոչ նյութական ակտիվների արժեզրկում (տե՛ս Ծանոթագրություն 12)	349,585	-
Բանկային ծառայություններ	84,319	120,976
Հարկային տույժեր և տուգանքներ	140,704	65,172
Այլ	43,785	8,589
Ընդամենը	**618,393**	**194,737**

10 Փոխարժեքային տարբերությունից զուտ օգուտ (վնաս)

	2025թ.	2024թ.
Դեբիտորական պարտքերի գծով փոխարժեքային տարբերություն	216,160	533,680
Կրեդիտորական պարտքերի գծով փոխարժեքային տարբերություն	(429,027)	(332,203)
Դրամական միջոցների գծով փոխարժեքային տարբերություն	(14,527)	(2,198)
Փոխարժեքային տարբերությունից զուտ օգուտ (վնաս)	**(227,394)**	**199,279**

11 Շահութահարկի գծով ծախս

	2025թ.	2024թ. (վերաներկայացված)
Ընթացիկ հարկ	309,445	259,112
Հետաձգված հարկ (տե՛ս Ծանոթագրություն 13)	(18,881)	159,385
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	**290,564**	**418,497**

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

	2025թ.	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2024թ. (վերաներկայացված)	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Շահույթ մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների)	668,421	-	2,894,595	-
Շահութահարկ՝ 18% դրույքաչափով (2024թ.՝ 18%)	120,316	18	521,027	18
(Չհարկվող եկամուտ) չնվազեցվող ծախսեր, զուտ	170,248	25	(102,530)	(4)
Շահութահարկի գծով ծախս	**290,564**	43	**418,497**	**14**

12 Ոչ նյութական ակտիվներ

	Լիցենզիաներ	Ֆիլմերի արտադրություն	Ընդամենը
Սկզբնական արժեք			
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	**1,160,934**	**354,623**	**1,515,557**
Ավելացում (վերաներկայացված)	437,855	1,751,383	2,189,238
Դուրսգրում	(440,876)	-	(440,876)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերաներկայացված)	**1,157,913**	**2,106,006**	**3,263,919**
Ավելացում	1,039,365	281,003	1,320,368
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**2,197,278**	**2,387,009**	**4,584,287**
Կուտակված ամորտիզացիա և արժեզրկում			
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	**982,393**	**35,747**	**1,018,140**
Տարվա հաշվարկ (վերաներկայացված)	550,065	84,448	634,513
Դուրսգրում	(440,876)	-	(440,876)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերաներկայացված)	**1,091,582**	**120,195**	**1,211,777**
Տարվա հաշվարկ	751,428	1,562,881	2,314,309
Արժեզրկումից կորուստ	349,585	-	349,585
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**2,192,595**	**1,683,076**	**3,875,671**
Հաշվեկշռային արժեք			
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերաներկայացված)	66,331	1,985,811	2,052,142
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**4,683**	**703,933**	**708,616**

Խումբը 2025թ. իրականացրել է ոչ նյութական ակտիվների արժեզրկման գնահատում՝ հիմնվելով դրանց ապագա տնտեսական օգուտների վրա: Գնահատման արդյունքում 349,585 հազար դրամի չափով ոչ նյութական ակտիվ ճանաչվել է արժեզրկված (2024թ. իրականացված արժեզրկման գնահատման

արդյունքում Խումբը չունի արժեզրկված ոչ նյութական ակտիվներ): Արժեզրկման գծով ծախսը ճանաչվել է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվության այլ ծախսեր հոդվածում (տե՛ս Ծանոթագրություն 9):

Ամորտիզացիայի ծախսը բաշխվել է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվության վաճառքի ինքնարժեք հոդվածին:

13 Հետաձգված հարկեր

Հետաձգված հարկերի շարժը ներկայացված է ստորև.

	2025թ.	2024թ. (վերաներկայացված)
Տարեսկզբի մնացորդ	(23,986)	135,399
Շահույթում կամ վնասում ճանաչված (ծախս) փոխհատուցում (տե՛ս Ծանոթագրություն 11)	18,881	(159,385)
Տարեվերջի մնացորդ	**(5,105)**	**(23,986)**

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

	1 հունվարի 2025թ. (վերաներկայացված)	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2025թ.
Հետաձգված հարկային ակտիվներ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	3,484	(773)	2,711
Ոչ նյութական ակտիվներ (վերաներկայացված)	477,064	(105,570)	371,494
	480,548	**(106,343)**	**374,205**
Հետաձգված հարկային պարտավորություններ			
Պայմանագրային պարտա-վորություններ (վերաներկայացված)	482,515	(114,874)	367,641
Փոխառություններ	22,019	(10,350)	11,669
	504,534	**(125,224)**	**379,310**
Զուտ դիրք - հետաձգված հարկային պարտավորություններ	**(23,986)**	**18,881**	**(5,105)**

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

	1 հունվարի 2024թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված (վերաներկայացված)	31 դեկտեմբերի 2024թ. (վերաներկայացված)
Հետաձգված հարկային ակտիվներ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	2,031	1,453	3,484
Ոչ նյութական ակտիվներ (վերաներկայացված)	133,368	343,696	477,064
	135,399	**345,149**	**480,548**

	1 հունվարի 2024թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված (վերաներկայացված)	31 դեկտեմբերի 2024թ. (վերաներկայացված)
Հետաձգված հարկային պարտավորություններ			
Պայմանագրային պարտավորություններ (վերաներկայացված)	-	482,515	482,515
Փոխառություններ	-	22,019	22,019
	-	**504,534**	**504,534**
Զուտ դիրք - հետաձգված հարկային ակտիվներ (պարտավորություններ)	**135,399**	**(159,385)**	**(23,986)**

14 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Ֆինանսական ակտիվներ		
Առևտրային դեբիտորական պարտքեր	115,712	475,520
Այլ դեբիտորական պարտքեր	303	-
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	**116,015**	**475,520**
Ոչ ֆինանսական ակտիվներ		
Տրված կանխավճարներ	2,492,096	2,098,362
Պետական բյուջեի գծով դեբիտորական պարտքեր	786,453	114,186
Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվներ	**3,278,549**	**2,212,548**
Ընդամենը առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	**3,394,564**	**2,688,068**

Բոլոր գումարները կարճաժամկետ են: Առևտրային դեբիտորական պարտքերի զուտ հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում:

Ղեկավարությունը հավատացած է, որ պետական բյուջեից դեբիտորական պարտքերն ամբողջովին ենթակա են վերականգնման:

Խմբի բոլոր առևտրային և այլ դեբիտորական պարտքերը վերանայվել են արժեզրկման հայտանիշների առկայության ստուգման համար: Արժեզրկման պահուստ չի ձևավորվել:

Տրված կանխավճարները հիմնականում վերաբերվում են աուդիովիզուալ ստեղծագործությունների արտադրության և նոր լիցենզյաների ձեռքբերման համար:

Ծանոթագրություն 21.2-ում ներկայացված են պարտքային ռիսկի վերլուծության վերաբերյալ բացահայտումները:

Տե՛ս Ծանոթագրություն 21.1-ը՝ առևտրային և այլ դեբիտորական պարտքերի արժույթների բացահայտման և արժութային ռիսկի վերլուծության համար:

15 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցներում արտացոլված են մնացորդները բանկերում: Դրամական միջոցների արժույթների բացահայտման և արժութային ռիսկի վերլուծության համար տե՛ս Ծանոթագրություն 21.1-ը:

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Բանկային հաշիվներ	951,881	452,829
Բանկային ավանդներ	807,844	-
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**1,759,725**	**452,829**

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի բանկային ավանդների պայմանագրերի մարման ժամկետը լրանում է 2026թ. հունվարին, ուստի դրանք ներկայացված են դրամական միջոցների և դրանց համարժեքների կազմում:

16 Սեփական կապիտալ

16.1 Կանոնադրական կապիտալ

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության կանոնադրական կապիտալը կազմել է 10 հազար ՀՀ դրամ:

17 Փոխառություններ

	Ոչ ընթացիկ	
	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Չապահովված փոխառություն	509,766	451,520
Ընդամենը փոխառություններ	**509,766**	**451,520**

Ոչ ընթացիկ փոխառության իրական և անվանական արժեքները հետևյալն են.

	Իրական արժեք		Անվանական արժեք	
	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Չապահովված փոխառություններ	509,766	451,520	573,850	573,850
	509,766	**451,520**	**573,850**	**573,850**

Փոխառությունը ստացվել է գործընկերոջից 2024թ.-ին 3 տարի ժամկետով՝ 0.01 տոկոսադրույքով: Իրական արժեքը հաշվարկվել է՝ զեղչելով դրամական միջոցների հոսքերը 13% տոկոսադրույքով: Ստացված անտոկոս փոխառության իրական արժեքով զեղչումից օգուտը կազմել է 122,330 հազար ՀՀ դրամ, որը ներառվել է ֆինանսական եկամուտում:

2025թ. ընթացքում նոր փոխառություններ չեն ստացվել:

18 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Ֆինանսական պարտավորություններ		
Առևտրային կրեդիտորական պարտքեր	894,296	1,289,649
	894,296	**1,289,649**
Ոչ ֆինանսական պարտավորություններ		
Հաճախորդներից կանխավճարներ	430,186	379,740
Վճարվելիք հարկեր և պարտավորություններ	555,892	350
Այլ	14,969	20,109
	1,001,047	**400,199**
Ընդամենը առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	**1,895,343**	**1,689,848**

Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում: Խումբն ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություններ, որոնք ապահովում են բոլոր պարտավորությունների ժամանակին կատարում:

Խմբի արտարժութային ռիսկի մասին ավելի մանրամասն տեղեկատվություն ներկայացված է Ծանոթագրություն 21.1-ում:

19 Պայմանականություններ

19.1 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Խումբը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Խմբի գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն: Քանի դեռ Խումբը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Խմբի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

19.2 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը հաճախակի ենթարկվում է փոփոխությունների, ինչը որոշ դեպքերում մեկնաբանությունների կարիք է առաջացնում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

20 Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ

20.1 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են Ծանոթագրություն 4.7-ում: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքներն ըստ կատեգորիաների ներկայացված են ստորև:

Ֆինանսական ակտիվներ

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	116,015	475,520
Բանկային հաշիվներ	951,881	452,829
Բանկային ավանդներ	807,844	-
Ընդամենը ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	**1,875,740**	**928,349**
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	**1,875,740**	**928,349**

Ֆինանսական պարտավորություններ

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ		
Փոխառություններ	509,766	451,520
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	894,296	1,289,649
Ընդամենը ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ	**1,404,062**	**1,741,169**
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**1,404,062**	**1,741,169**

21 Ֆինանսական գործիքների ռիսկ

Ռիսկի կառավարման քաղաքականությունները և նպատակները

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Խումբը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

Խումբը ներգրավված չէ սպեկուլյատիվ նպատակներով ֆինանսական ակտիվների ակտիվ առքուվաճառքի գործարքներում, ինչպես նաև չի թողարկում օպցիոններ: Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Խումբը կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

21.1 Շուկայական ռիսկի վերլուծություն

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Խումբը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժութային ռիսկի, որը բխում է գործառնական գործունեությունից:

Արտարժույթի ռիսկ

Խումբը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Խմբի գործարքների հիմնական մասն իրականացվում է արտարժույթով: Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունն առաջանում է Խմբի՝ արտերկրյա վաճառքներից և ձեռքբերումներից, որոնք, ի սկզբանե, արտահայտված են ԱՄՆ դոլարով եվրոյով և ռուբլով:

Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Խմբին ենթարկում են արտարժութային ռիսկի, նկարագրված են ստորև: Արտացոլված գումարներն իրենցից ներկայացնում են հիմնական ղեկավար անձնակազմին տրամադրված տվյալները, որոնք արտահայտված են հայկական դրամով՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի ամսաթվի փոխարժեքով.

Հոդված

31 դեկտեմբերի 2025թ.	ԱՄՆ դոլար	Եվրո	Ռուբլի
Ֆինանսական ակտիվներ			
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	99,058	5,806	8,979
Դրամական միջոցներ	1,597,340	2,804	30,721
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	**1,696,398**	**8,610**	**39,700**
Ֆինանսական պարտավորություններ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	372,187	2,522	453,493
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**372,187**	**2,522**	**453,493**
Զուտ արդյունք	**1,324,211**	**6,088**	**(413,793)**

Հոդված

31 դեկտեմբերի 2024թ.	ԱՄՆ դոլար	Եվրո	Ռուբլի
Ֆինանսական ակտիվներ			
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	460,037	15,453	-
Դրամական միջոցներ	444,629	69	7,189
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	**904,666**	**15,522**	**7,189**
Ֆինանսական պարտավորություններ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	575,325	143,080	566,607
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**575,325**	**143,080**	**566,607**
Զուտ արդյունք	**329,341**	**(127,558)**	**(559,418)**

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Խմբի զգայունությունը՝ ԱՄՆ դոլարի, եվրոյի, ռուբլու նկատմամբ ՀՀ դրամի 5% (2024թ.՝ 5%) աճին ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում է դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 5%-ով (2024թ.՝ 5%):

Դրամի արժևորումն ԱՄՆ դոլարի, ռուբլու և եվրոյի նկատմամբ 5%-ով (2024թ.՝ 5%) կունենա հետևյալ ազդեցությունը:

	ԱՄՆ դոլարի ազդեցություն		Եվրոյի ազդեցություն		Ռուբլու ազդեցություն	
	2025թ.	2024թ.	2025թ.	2024թ.	2025թ.	2024թ.
Շահույթ կամ վնաս	66,211	16,467	304	(6,378)	(20,690)	(27,971)

Արտարժույթի փոխարժեքի տատանման ազդեցությունը տարվա ընթացքում փոփոխվում է՝ կախված արտերկրյա գործարքների ծավալից: Այդուհանդերձ, վերը ներկայացված վերլուծությունը կարելի է համարել Խմբի՝ արտարժութային ռիսկին ենթարկվածության արտացոլումը:

21.2 Պարտքային ռիսկի վերլուծություն

Պարտքային ռիսկի առավելագույն ազդեցությունը ներկայացված է հետևյալ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներով՝

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	116,015	475,520
Բանկային հաշիվներ	1,759,725	452,829
	1,875,740	**928,349**
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	**1,875,740**	**928,349**

21.3 Իրացվելիության ռիսկի վերլուծություն

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Խումբն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները:

Խումբը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:

Հետևյալ աղյուսակում ներկայացված է Խմբի ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների գծով պայմանագրային մնացյալ մարման ժամկետները: Աղյուսակը պատրաստված է ֆինանսական պարտավորությունների չզեղչված դրամական միջոցների հոսքերի հիման վրա՝ հաշվի առնելով ամենավաղ ամսաթիվը, երբ Խումբը ստիպված կլիներ մարել այդ պարտավորությունները: Աղյուսակը ներառում է տոկոսների և մայր գումարի գծով դրամական միջոցների հոսքերը:

2025թ.	Անտոկոս	Ընդամենը
Մինչև 1 տարի	894,296	894,296
1-5 տարի	573,850	573,850
	1,468,146	**1,468,146**

2024թ.	Անտոկոս	Ընդամենը
Մինչև 1 տարի	1,289,649	1,289,649
1-5 տարի	573,850	573,850
	1,863,499	**1,863,499**

Խումբն իրացվելիության ռիսկի գնահատման և կառավարման ժամանակ հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից ակնկալվող դրամային հոսքերը, մասնավորապես՝ դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերը:

22 Կապակցված կողմեր

Խմբի կապակցված կողմերը ներառում են իր միակ մասնակցին, ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերությունները, ինչպես նաև հիմնական ղեկավար անձնակազմը, ինչպես նկարագրված է ստորև:

22.1 Վերահսկողություն

Խումբը վերահսկվում է իր միակ մասնակցի՝ պարոն Գեորգի Շաբանովի կողմից, ով նաև Խմբի իրական շահառուն է:

22.2 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հաշվետու տարվա ընթացքում Խմբի իր կապակցված կողմերի միջև իրականացվել են հետևյալ գործարքները, և հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդները հետևյալն են:

Գործարքներ

	2025թ.	2024թ.
Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ		
Ծառայությունների մատուցում	105,873	3,238
Փոխառությունների տրամադրում	82,025	-
Փոխառությունների մարումներից մուտքեր	82,025	299,438
Հիմնական ղեկավար անձնակազմ		
Աշխատավարձ և պարգևատրումներ	11,043	9,015

Մնացորդներ

	2025թ.	2024թ.
Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	153	30

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի ղեկավարությունը և նրանց անմիջական ազգականները կանոնադրական կապիտալում էական մասնակցություն չունեն: